Թ. 791 ՏԱՐԻ ԵՐԿՈՏԱՍԱՆ — ՈՒՐԲԱԹ — 1881 ՅՈՒԼԻՍ 31

ՀԱՅՐԵՆԻՔ

10 փարայ — ՕՐԱԹԵՐԹ — 10 փարայ

ԱԶԳՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պօլսոյ եւ գաւառաց համար 7 արծաթ մէճիտ կանխիկ. գաւառական թղթատարութեան ծախքը մեր վրայ է: վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդք ալ կընդունուին:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Բիզա փաշա խան թ. 14: Խմբագրութեան ուղղեալ գիր ետ չը տրուիր: Յանուցման տողը մէկ անգամի համար 3 դրուշ է. աւելի անգամի համար սակարկութիւն կընլայ:

ՆԵՐՔԻՆ

Դրտեղէն երեւելի երեք մահմետական եկած են այս օրերս ի Պօլիս, որոց անուններն են Հասան էֆէնտի Քաուրզատէ, Ալիզատէ Մէհմէտ Պէյ, և Փրասիօնաքի Տերվիշ էֆէնտի: Ասոնք իրենց հայրենակիցներէն պաշտօն ընդունած են կրետէի վագըֆներու խնդրոյն լուծումը խնդրելու: Առկէ առաջ կայսերական հրովարտակաւ մզկիթներու և դըպրոցներու սահմանեալ վագըֆներու տուրքերը չպահանջեն որոշուած և անոնց տեսչութիւնը մահմետականաց յանձնուած էր: Գաւառական ժողովը Քրիստոնեից մեծամասնութեամբ վաւերաց յայտներ է [illegible] թղթերը ջնջել, ուստի մահմետական երեսփոխաններէն պահանջեր է որ այդ թղթերը ժողովին յանձնեն: Թղթերու քննութենէն տեսնուեր է որ այնպիսի գիւղեր կան որոնց կալուածագրերը ոչ տեսչութեան և ոչ Մէհքէմէի դիւանատունը կան: Ժողովը զայս տեսնելով կորոշէ այս գիւղերը իրր վագըֆի չը ճանչել և ութն ամիս պայմանաժամ կուտայ մահմետական պատուիրակներուն որ Պօլիս գալով Լիվքաֆի պաշտօնէութեան գիմեն և վաւերական թղթերը պահանջեն: Ահա այս պաշտօնով մայրաքաղաքս եկած են յիշեալ երեք մահմետականները:

— Քաչկարի Լիմերին որդին Խուլի Հան Պէյ յատուկ չոգենաւով Թօքատուլի պալատը գացեր և Մարդարէին վերարկուի հանդիսին ներկայ գտնուեր է. յետոյ վեհ. Սուլթանէն ընդունուեր է:

— Անգղիական Անթիլօպ չոգենաւին մէջ չորեքշաբթի իրիկուն տրուած գեղջկական պարը արծաթափայլ լուսոյ լուսնով և օդին գովութեամբն չատ չքեղ ու փառաւոր եղաւ: Բոլոր ներկայ եղողները յանչափս գոհ եղան: Ընդունելութիւնը խիստ չքեղ եղաւ և ամէն դիւրութիւնք նախապատրաստեալ էին չոգենաւին մէջ: Ժամը 10 ին հանդիսականք նաւակներով չոգենաւն ընդունուեցան. տիկիններըը կընդունէր անգղիացի սպայներէն մէկուն տիկնոջ կին Պրուն: Պարը սկսաւ ժամը 11 ին Լանսիէով մը առաջնորդութեամբ Ալիա Մալա նուագածուոյ խմբին: Տեսարանը խիստ դեղեցիկ է, և հիւրերուն մեծ մասը համազգեստով էր, ամէնքն անդիմակ, որոնք զանազան ընտիր զգեստներ հագած էին: Պարը մինչև կէս գիշեր տեւեց, որմէ անմիջապէս վերջը սեղանի նստան, որ ամենայն շքեղութեամբ և ճոխութեամբ պատրաստուած էր:

Այսպէս հանդէսը մինչև արշալոյս տեւեց, և պար ու երաժշտութիւն անընդհատ շարունակեցին. ցայնժամ բազմականք դարձեալ նաւակներով իրենց տեղերը վերադարձան գոհ և գուարթ հանդիսին չքեղութենէն ու վայելուչ[illegible] սակայն առաջին անգամ տեղի կունենար Անթիլօպի չոգենաւին մէջ:

Այն գեղջկական պարին ներկայ կը գտնուէին լորտ Տիւֆըրինի և իր տիկինը, Ասատիոյ, Իտալիոյ և Պարսից դեսպանները, Ռուսիոյ, Գերմանիոյ և Գաղղիոյ գործակատարները հանդերձ ընտանեօք, տիկին և օրիորդ կոչըն և 100 ի չափ անգղիացի ու գաղղիացի երեւելի ընտանիքներ:

Հանդիսականներուն մեծ փայլ կը տար լորտ Տիւֆըրինի որդի Պ. Սարթ օրի որ չինական բարեձև զգեստ մը հագած էր, ինչպես իր մօրըրիկ կինը Ձարոնի զգեստ:

— Ծար կըսեն թէ արտաքին գործոց պաշտօնեայ Վահիտ Ասիմ փաշա իտալական դեսպան Քօրթի կոմսին ծանուցագրոյն յայտարարեր է թէ Բ. Դուռը սպարապետութեան յանձնարարած է որ այս խնդիրը եւրոպացի գործակատարաց հետ լուծելու հրաման ղրկէ Հիտայէթ փաշայի:

Ծար կը յաւելու թէ այս պատասխանը բերանացի հաղորդուեր է:

— Ասատիոյ դեսպանը և իր տիկինը Ա. յա-Սոֆիայի մզկիթն այցելեր են առ[illegible] իրիկուն:

— Հելլէն անուն յունական չոգենաւը երեք նաւ իր հետ կասկըմ քաշելու ատեն չուանը կը վրթի և առաջատար նաւին մէկը հոսմին բռնութենէն վանիքէօյի ծովեզրը ինկալով քանի մը հալըններու կը դարնուի և վանդակները կը կոտրտէ: Արնաւէտ գիւղի պահականոցի հրամանատարը նաւապետն անմիջապէս կը ձերբակալէ:

— Աթէնքէն կը գրեն թէ Յունաստանի թագուած երկիրներու բնակիչներէն մին ձեմալ պեյ ընգզինքը Հելլենական խորհրդարանին երեսփոխան պիտի առաջարկէ եղեր:

— Պաղտատի մէջ յունական եկեղեցի մը շինուիլ սկսեր է:

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա 10 օգոստ. [illegible] ժողովին ըրաւ Իրլանտիոյ համար առաջարկեալ ագրարակային օրինաց ծրագրին մէջ:

Նախարարութիւնը կընդդիմանայ այն ամեն բարեփոխմանց, որք առաջարկեալ օրինաց էական սկզբանց կը դպչին:

Տընտէէն լուր կուտան թէ գաժոխային մեքենայ մը գտնուեր է քաղաքին կազի գործարանին մէջ:

Պ. Պրատլոյ օձիկի հիւանդութենէ բռնուեցաւ յանկարծակի:

Ուաշինկթընէն 10 օգոստ. Կարթիլտ ղօրավարն այս դիւերը հանդիսաւ անցուց: Ջերմը նուազած է:

Բեդրըպուրկ 10 օգոստ. Սուտ կը հանուի այն ղրոյցը թէ Պ. Կիերս կ. Պօլսոյ դեսպան պիտի անուանուի փոխանակ Պ. Նովիքօֆի:

Թուրնուղ 10 օգոստ. Կիւլէթի առջև սպասող Ֆրանսական խաք Բէրէյր չոգենաւը բռնկեցաւ յառաջակոչմէն, և կը յուսացուի որ քիչ ժամակէն կրնայ ջուրին երեսն հանուիլ:

Նիւ-Եօրք 10 օգոստ. Փաստաբան մը ղրով ծանոյց արտաքին գործոց նախարար Պ. Պլէյնի թէ Հարթման Ոչխականը Քանատա փախեր է, որովհետև Պ. Պլէյն կարծիք յայտնած էր նմա թէ իր իրեւ մարդասպան ձերբակալութեան և Ռուսիոյ յանձնուիլը հնարաւոր է:

Փաստաբանը կը խնդրէ Պ. Պլէյնէն որ իրեն վերադրեալ այս կարծիքն, հերքէ

և հաւատալ տայ թէ Հարթման չպիտի ձերբակալի։

Իւր պատասխանին մէջ Պ. Պլէյն առնամօթ կանուանէ փաստաբանին նամակը և յանձն չառնուր կառավարութեան որոշումը ծանուցանել։

Փարիզ 11 օգոստ.

Այս առտուան Բէթիւպլիք Ֆրանսէզ լրագրին Պ. կամպէթթայի մէկ նամակը կը հրատարակէ, յորում Պ. կամպէթթա կը ծանուցանէ թէ Պէվիլի ընտրողական մասնաժողովոյն յայտարարութիւնը և առնոր ծրագիրը կընդունի, ծրագրոյն պարունակութիւնն է Սահմանադրութեան մասնակի բարեփոխութիւնը, ցանկով ընտրութեան վերահաստատութիւնը, արդարութեան օրինաց բարեփոխութիւնը, ընդհանուր զինուորական ծառայութեան երեք տարի ստհմանուիլը, վարչական ապակեդրոնացման բարձունը, քաղաքային գործոց համար ապակեդրոնացման դրութեան հաստատուիլը. սինտիքաթօրներու և ընկերութեանց աղատութեանն աչխատիլ. ձերոց համար հանգստեան թոշակի սնտուկներ հաստատել։

Նանսի 11 օգոստ.

Նախարարաց ժողովին նախագահ Պ. Ժիւլ Ֆէրրի թաղասկատութեան կողմէն իրեն տրուած հացկերոյթի մը մէջ ճառ մը խօսելով դադարեալ երեսփոխանաց մեծամասնութիւնը դոլեց, և ի մեծոյ բացուելիք խորհրդարանին մէջ ալ նոցա ի պաշտօն կոչուելու մասին յոյս յայտնելով, սահմանադրութեան մասնակի բարեփոխութեան վերաբերեալ առաջարկն ընդունած ըլլալը ծանոյց։

ԱԶԳԱՑԻՆ

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻ

Փարիզ 11 մարտ 1881

Փետրվարի 27 ին Փարիզ տեղի ունեցած չքեղ հանդէսը ի պատիւ գարուս ամենամեծ բանաստեղծ անմահն Վիկթոռ Հիւկոյի, մեր սիրելի ազգին համար ալ կարևոր բաժին մը հանեց, որոյ վասն քանի մը տող «Փարոսիդ» մէջ հրատարակուելու փափաքով կը փութամ ուղղել ի ցնծութիւն ճշմարիտ և հեռատես հայրենասիրաց։

Շատերու ծանօթ է արդէն որ Վիկթոռ Հիւկոյ Ավընիւ տ'Էլօ 130 թիւ կը նստի, Լուսինեան Մարիամ իշխանուհւոյն ապարանին կից և նոյն իսկ իւր սեպհականութիւնը եղած գեղեցիկ ապարանին մէջ։ Սոյն մերձակայութիւնն մեծ մտերմութիւն պատճառած է այս երկու նշանաւոր ընտանեաց մէջ և երջանիկ եմ ըսելու՝ խնամ օգտաւէտ հայոց ազգին համար։ Այս կերպիւ անմահ բանաստեղծը մեր վրայօք կատարեալ տեղեկութիւն ստացած է և ջերմաջերմ համակրութիւն ղդացած է մեր սիրելի ազգին համար։

Գերապատիւ խորէն սրբազանն ալ՝ որոյ դրական հաղորդիւտ ձերքերը լաւ կը գնահատէ մեծն Վիկթոռ Հիւկոյ, մանաւանդ նորին սրբազնութեան վերջին անդամ փարիզ անցուցած ժամանակը՝ ի նպաստ Հայաստանի սովելոց, զօրաւորապէս ներգործած է յայսմմասին։

Արդ հանդէսին գործադիր ժողովը խնդրեր է Հայապդի և հայրենասէր Իշխանուհիէն արտօնութիւն, 110 նուագածուք զետեղել Լուսինեան ապարանին պարտէզներուն մէջ։ Վսեմափայլ Իշխանուհին ամենայն սիրով ընդունեց այս առաջարկութիւնը։ Նոյն կիրակի օրը Վիկթոռ Հիւկոյի հանդէսը գրեթէ ամբողջապէս Հայկական չքեղ յարկի մը տակ կատարուեցաւ։ Լուսինեան ապարանին վանդակեայ երկաթէ դռները ժամը առաւօտեան 11 էն ի վեր բացէին և բազմաթիւ ազգայինք և մեծամեծ դպղնիացիք և օտարականք խուռն բազմութեամբ կը դիմէին անդ և ասիական հիւրասիրութեամբ բազկատարած կընդունուէին։ Ասկէ զատ պարտիզայ ծառերուն, վանդակայ և պատերուն վրայ խումբ խումբ ժողովրդականք խըռնեալ էին, խեղճ կին մ'ալ սանդուխ մը դրած եր ապարանին մէկ պատին վրայ և ստակով մինչին դասու մարդոյ վաճառու կուտար։

Վսեմափայլ Իշխանուհին և իւր ամուսինը կատարեալ ազատութիւն տըւած էին ժողովրդին ըստ հաճոյից չըրջապտիլ, որով ականջալուր լսեցի շատերն՝ թէ «Ահա՛ ազատասէր և ժողովրդասէր ազնուական ընտանիք մը, ահա՛ Վիկթոռ Հիւկոյի տան տէր ըլլալու արժանի իշխանական գերդաստան մը»։ Բայց այս բաւական չէր տեղատած։ Մարիամ Իշխանուհին ժողովուրդին տըւած ազատութիւնը, հրաւիրելոյ և մեծամեծայ ըրած հիւրընկալութիւնը և նուագածուց բաշխել տուած ըմպելիքը բաւական չէր սեպած . . . անմահն բանաստեղծին պատրաստած եր ի նուէր յատկապէս իր ձեռագործ մէկ հրաշակերտ բարձր՝ ամենանուրբ կերպիւ թանուած և պատիներով զարդարուած։ Երբ Վ. Գիւիտոն իշխանը արծաթեայ սինակի մէջ երջանկաւէտ բանաստեղծին մատոյց գոյն յանուն Իշխանուհւոյն, Վիկթոռ Հիւկոյ սաստիկ յուզեալ և յոյժ զմայլեալ՝ «Ահա, գոչեց ճշմարիտ Պարիկի (Փէ) մը հրաշակերտը» և ձեռքովը իշխանուհւոյն համբոյրներ կը ղրկէր։ Նոյն երեկոյեան ընդունելութեան ատեն Վ. Գիւիտոն Իշխանին նուրանոր և սրտագին շնորհակալութիւնները մատուցանելէն ետև Վիկթոռ Հիւկոյ յաւելուց. «Կը սիրեմ և կը յարգեմ նաև ձեր արքեպիսկոպոս եղբայրը. նա այն հաղուագիւտ անձերէն մին է՝ որոյ բերկրութեամբ ուսած եմ իմ բարեկամութիւնս։ Մինչ երջանիկ պիտի ըլլամ օգտակար լինել իրեն և թէ իրեն հոգևոր հովուութեան յանձնուած ժողովուրդին՝ որ կը սիրէ, կը պատուէ և կը գնահատէ դինքը»։ Փարիզու Հայ գաղթականութեան ներկայացուցիչք չափազանց գոհ եղան այս անուղղակի և անյուսալի աղգային հանդիպէն և իրենց խորին շնորհակալութիւնները յայտնեցին Լուսինեան հայրենասէր դերդաստանին։

Շատ մը օրագիրք՝ ընդ որս «Ռուվիէ տիւ Մուառ», «Իլլէնման» և «Կլօպ» այս առթիւ Լուսինեան ընտանեաց չատ մը դրուատիք հրատարակեցին։

Կը փութամ նաև յիմնցնել՝ որ վսեմ. Մարիամ Իշխանուհին ամսոյս 19 ին ալ մէկ նոր նուագահանդէս մը պիտի տայ իւր ապարանին մէջ և իւր երաժշտական սքանչելի տաղանդին սաստարովը, ի նպաստ բարեգործական հաստատութեան մը, ըստ իւր անսպառ աղքատասիրական ազնիւ սովորութեան։ Այս առթիւ դալթեալ սիրելի և պանծալի Հայ անունը պիտի փառաւորուի գաղղիական լրագրաց մէջ։

Ի վերջոյ ուրախ եմ ծանուցանելու Ձեր Պատուական Հանդիսին մեծարգոյ ընթերցողաց, որ քիչ ատենէն Տիկին Աննա Պօթօ գաղղիացի անուանի հեղինակուհին՝ որ արդէն օգտակար և նշանաւոր գրքեր հրատարակած է և համբաւաւոր ճեմարաններու ալ անդամ է, հին և նոր դարուց մէջ նշանաւոր հզոր կանանց կենսագրական Բառդիրքը պիտի հրատարակէ։ Կը վստիքի որ Հայ Տիկնանց մէջէն աղգասիրութեամբ, ուսումնասիրութեամբ և բարեգործութեամբ նշանաւոր հանդիսացած կանանց կենսագրութիւններ գտնուին իւր համաչխարհական բառգրքին մէջ։ Ամենայն անձնուիրմամբ և աղգասիրութեամբ պատրաստ եմ հաւաքել ինձ ուղղեալ լուրջ տեղեկութիւնք և գաղղիերէն թարգմանել։ Կը խնդրուի որ կենսա[illegible]

Յ. Թիւլսիզեան
(Փարոս Հայաստանի)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէյլբը միաշա նրէկ մայրաքաղաքս հասաւ։

— Մէքիկ դրկուելիք տրքունի ընծայները և ուխտաւորութեան կարաւանը վաղը ճամբայ պիտի ելնեն. այս առթիւ չորս հարիւրի չափ աղքատ ձրիաբար ուխտի պիտի դրկուին։

— Փարիզէն Մէմաֆօրի կը հեռագրեն թէ Գաղղիոյ արևմտեան կողմը կատարուած նոր ընտրութիւնք չափաւոր հասարակապետականաց, իսկ արևելեան կողմի ընտրութիւնք Պ. կամպէթթայի նպաստաւոր ևն։

— Վաղըմ կըսե թէ Աւստրիոյ դեսպան Պ. Տալիս երկաթուղեաց միացման խնդրոյն վրայ Բ. Դրան նորանոր առաջարկութիւնները ըրեր է. Բ. Դուռն ալ վիճնայի դեսպանին քանի մը նոր հրահանգներ դրկեր է այս մասին, սակայն իւր վերջնական տեղեկութիւնները տակաւին ծանուցած չէ. վեհ. Մուրմանը Արևելեան-Րումելիի և Պուլղարիոյ երկաթուղեաց միացման և Բէչթայի ու Պօլսոյ մէջ սղղակի հաղորդակցութիւն հաստատելու մասին հրաման շնորհեր է. հիմայ Նիշի և Բրէչդ լինալի վրայէն, Պէլգրատի Միթրօվիցայի և Սեվլիևկի գիծերը միացնելու կաշխատուի։

— Պէյրութի վաճառականներէն մին

պէյրութի ծովափանց վրայ քարէ նաւամատոյց մը չինելու արտօնութիւն ստանալու համար ծրագիր մը մատուցեր է Բ. Դրան որ ծրագրին առաջին մասն ընդուներ է ;

— Աւստրիոյ կայսրը Լէօբոլտ պատուանշանին երրորդ աստիճանը շնորհեր է Աքեայի նախկին կառավարիչ Զիա պէյի, որ կայսեր որդւոյն մեծ հիւրընկալութիւն ըրած էր ։

— Ադրիանուպօլսէն Փարիզի կը գրուին թէ Տէօէ ազատէն 20 քիլոմէթր հեռի Պիտիկլի գիւղին մէջ աւազակայ խումբ մը տասը հոգիէ բազկացեալ մահմետական ընտանիք մը լեռը հաներ է. սակայն չորս վնասոր վրանին յարձակելով և կրակ ընելով, աւազակները կարծեր են թէ գօրայ մեծ բազմութեան մը դիմայ կը գտնուին. ուստի աճապարանօք վախեր են, գերիները և իրենցմէ քանի մը վիրաւորեալ և վեց Մարիթինի հրացան թողլով պատերազմի գաշտին վրայ ։

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՕՐՍՄ.

Օամ. Գօնսօլիա Դոցուեցաւ երէկ իրիկուն	18-24
» » Բացուեցաւ այս առաւօտ	18-26

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Սօսիէթէ ժէնէրալ Անդղ. Լիր.	5-13
» Օթօման » »	4-
Կ. Պօլսոյ Պանքան » »	11-35
Բրէտի ժէնէրալ » »	6-3
Փոխ. 1863 (Մութան) » »	—
» 1865 (Մութան) » »	93-20
» 1869 (Բինաթ) » »	92-20
» 1872 (Պօն սիւ Մրէզոր)	30-
» 1873 (Բինաթ) » »	91-
Թրամվայ Օամ. Լիր	4-2 20
Թղթադրամ » »	1020
Րուպիէի երկաթուղի Ֆրանք	37-20
Լաւրիում »	110-20

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
(Օամ. ոսկին 100 դուրուշէն)

Անգղիկն. ոսկի	109- 5	Գարպօն արծաթ	94-30
Գաղղիական »	87-10	Մէճիտիէ	107-24
Բօլ »	89-38	Վիէննայ	127-15
Բրիմլից »	50-35	Չինգնայ	210-30
Գարպօն Մուղի	8-65	Մէճաիք	203-20

ԿԱՐԵՒՈՐ ԱՋԴ

Պաղչէ Գարա Քիւ. 8 Համապգային պետրանին մէջ ամէն օր կը պանուին Տօքթէօր Անանեան Էֆէնտի, որ սպրանի բժշկական դպրոցին ուսուցիչ է և կակորդի, բիմ ու ականջի հիւանդութեանց մէջ մեծ համբաւ ստացած է, Տօքթէօր Վէնէսեանօղլօ որ Բերիայի մէջ համբաւաւոր է, նոյնպէս աշխարհի Տօքթէօր Իլիա Ապգինաը Պէյ որ սպրանի բժշկական դպրոցին ուսուցիչ է և ատամնաբոյժ Պ. Գալայեանի ։

Տօքթէօր Անանեան ամէն օր ժամը 2 էն մինչև 3 և 8 էն մինչև 10 զեղարան կը պահէ. իսկ ուրբաթ օրերը կէս օրէն մինչև ժամը 8 սպրանները ձրի կը զարմանէ ։ Իսկ Տօքթ. Իլիա Ապգինաը Պէյ երէքշաբթի, հինգշաբթի և չարաթ օրերը ժամը 3 էն մինչև 5, ուրբաթ օրերը 7 էն մինչև 9 սպրանները ձրի կը զարմանէ ։ Տօքթէօր Վէնէսեանօղլօ ամէն օր ժամը 3 էն մինչև 4 և 9 էն մինչև 10 զեղարան կը պահէ. չորեքշաբթի օրերն ալ միևնոյն ժամերու մէջ ձրի կը նայէ ։ Իսկ Պ. Գալայեանի ամէն օր ժամը 6 էն մինչև 10 զեղարան պիտի պահէ, և հինգշաբթի օրերն ալ միևնոյն ժամուն մէջ ձրի պիտի նայի ։

Ազբաստայ ժամն պետ. պետ. կը մնասակարկ սոյն զեղարանը ։

Ա ՐՏԱՔԻՆ

— Զիկագոյէն հեռագրուած են յուլիսի 11էն Լօնտօնի «Տէյլի Նիւս» լրագրին. — Ա յսօր կէս օրին Գրիսկոմի կամաւոր ծովի քառասուն և հինգերորդ օրն էր հասած ։ Վապը կէս օրին բժ. Տանիէլի հետևողը թատրոնի բեմի վերայ իր առաջին ճաշը կանէ ։ Երեկ կատարուած քննութիւնները հետևեալ հետևանքները տուին. ստամոքսի ծաւալը քառասուն և երկու օրուայ ընթացքում պակասել է 43½էն մինչև 36 սանտիմէթր, ապրի ծաւալը 21—17½ է, ձեռքի ծաւալը 12—10½ ։ Երեկ Գրիսկոմը ստով երկու մղոն մաս եկաւ ։ Նրա զարկերակը 61 է, շնչառութիւնը 17, բարեխառնութիւնը 98½ ։

— «Գրաչարի ձեռքը քանի՞ վերստ է կատարում մի տարւայ մէջ». — Մի վիճակագրող մանրամասն կերպով հաշվելով դուրս է բերում, որ գրաչարը օրը տաս ժամ բանելով, կը ժողովէ մօտաւորապէս 12,000 տառ ։ Տարուան մէջ էլ 300 աշխատանքի օր հաշվելով, կարելի է ենթադրել, որ տարւայ մէջ մի գրաչարը 3,600,000 տառ կը ժողովէ ։ Տարբերի արկղի և գրաչարի միջի տարածութիւնը երկու սանտիմէտր հաշվելով, հետևաբար տարւայ մէջ կը կազմի 7,200,000 սանտիմէտր ։ Իսկ երեք և կէս հազար սանտիմէտրը կազմում է մի աշխարհագրական մղոն, ուրեմն և մի տարւայ մէջ վերոյիշեալ պայմաններով, գրաչարի ձեռքը անում է մօտ երեք հարիւր մղոն կամ երկու հազար վերստից աւելի ։

— Միացեալ նահանգների մէջ տէլեֆօնը գործ են ածում քրէական գործերի թեթևութեան համար ։ Բանտի սենեակների պատի մէջ չինում են այնպէս անուանեալ միքրօֆօնը և այն կերպով են չինում, որ ամենևին չէ երևում երբ յանցաւորների մօտ մնում են նրանց բարեկամները կամ ազգականները, նրանք երկար ճնում են այնտեղ միասին, և ամենևին չը կասկածելով, որ պատերը ականջներ ունին, սկսում են բացատկել խօսիլ, առանց որևէ գաղանիքների ։ Դատարանի սենեակի մէջ թելեֆօնի չնորհիւ ստացվում են նշանաւոր ցոյցեր և տեղեկութիւններ, որոնք մի այլ միջոցով ամենևին չեր կարելի ձեռք բերել ։

— Լօրդ Բիկօնսֆիլդը մտանելիս թոշնում է, ինչպէս է, ինչպէս նրա կատակատարը ցոյց է տալի, 76,687 ֆր. ստ., ծախսերը և պարտքերը հանելով մնում է 63,312 ֆ. ստ. (600,000 ռ.).

— «Ամերիկական լրագրները». — Նիւ-Եօրկի լրագրերից մէկը իր ընթերցողներին Իպսօմի (Դերբի) ձիարշաւանների մասին տեղեկութիւն հաղորդից ոչ թէ միայն միւս ամերիկական իր հակառակորդ լրագրերից, այլև մինչև անգամ եւրոպական լրագրերից էլ շատ ։ Լօնդօնից հեռագիրը քաշուեցաւ 11 ժ. 9½ ր. և դրասենեակի մէջ ստացուեցաւ 11 ժ. 14 ր. ։ 6 րոպէից յետոյ արդէն հեռագիրը ապուած էր, իսկ 47 րոպէից յետ լրագրին արդէն փողոցներում ծախվում էր ։

— Զիկագոյից հեռագրում են յուլիսի 13ից «Տէյլի Նիւս» լրագրին. — Գրիսկոմը իր ամբողջ ծովի ժամանակ կորցրեց իր կշռից 49¾ ֆ. Նրա ծովի առաջին օրը նրա զարկերակը 88 էր, իսկ իր ծովի վերջին օրը զարկերակը 96 էր, իսկ բարեխառնութիւնը 98 ։ Նա ոչինչ չարչարանք չէր կրում, բացի սրտի խառնվիլը, որ իր ծովի երեսուն և եօթ երորդ օրը պատահեցաւ նրան սաստիկ տենդի հետ միասին ։ Միջին հաշով նա օրը խմում էր 32 ունցիա ջուր ։ Ոչինչ կասկած չը կայ, որ Գրիսկոմը աշնուութեամբ հետևում էր իր ծովին ։ Նրան հետևող բժիշկները յայտնեցին, որ նրանք գիտական նշանաւոր գիւտեր են արել ։

— Վիտտէն քաղաքում (Գերմանիայում) կատարուել է մի ինքնուրոյն հանգէս, Այնտեղի լողարանում իրենց լողատարհնատի հանդէսը կատարում են, ոչ թէ միայն տղամարդիկ, այլև կիները ։ Նորերումս մրցութիւնը աւելի քաջալերելու համար կատարուեցաւ «աղջիկների լողալու հանդէսը», որին մասնակից էին շատերը ։ Ա.յդ մրցութեան մէջ լողացող աղջիկները պէտք է նշանակեալ տեղից մի որոշ տեղ լողային և յետ լողային, նոյնպէս տախտակից վայր թըռչէին ջուրը, ջրի տակովը լողային ։ Ա.յդ բոլոր վարձերը կատարուեցան մեծ ճարպիկութեամբ, որով թէ լողացող աղջիկներին և դրանց վարժուհի տիկին Վօլֆին մեծ պատիւ է բերում ։ Ա.յդ հանդէսի վերջը պարդևաբաշխութիւն էր ։ — Մեր աղջիկները եթէ մրցութեան հանդէս կատարեն, ամենամեծ պարգևները կատանան – լսոյում ։

— «Մանրաքարշ ճանապարհորդք». — Մի քանի ժամանակ առաջ Օրլեան եկաւ մի ահագին հաստութեան ճանապարհորդ և վերադաս երկրորդ կարգի տոմսակ Բօրդօ գնալու համար ։ Երբ երկաթուղու գնալու նշանը տրուեցաւ, երեւեցաւ որ նա չէ կարողանում հանել երկաթուղու կառքերի ոչ մէկ դռների մէջ ։ Իվանի կառավարչին միայն մի բան էր մնում անելու, այն է տեղաւորել նրան ապրանքների առանձին կառքի մէջ, որ և կատարուեցաւ գնացող հասարակութեան բարձրաձայն ծիծաղին առիթ տալով ։ Այս հաստիկը 22 տարեկան է, նրա քաշը 210 քիլօկրամ մ է, (13 պուտ), իսկ իրանի (մարմնոյն) չրջապատը 1 ու կէս սաժէն ։ Մեզու.

Գ. Խմբագրապետ

Երէկվայ «Մասիս»ի մէջ մի յայտարարութիւն էր տպված ։ Յայտարարութեան մէջ ասված էր թէ իմ մի վոքրիկ յօդուածս չի կարող տպել «Մասիսը», որովհետև նամաքիս մէջ «մակդիրներ» շատ կային, որոնք պատիւ չեն բերի ոչ «Մասիսի» խմբագրութեան և ոչ էլ ինձ» ։ Ինչ կվերաբերվի պատուաճանաչութեան, այն էլ Մասիսի, այդ մասին կխօսինք իր ժամանակին, առնելով առայժմ հրապարակապէս կյայտնեմ, որ

«Մակդիրների» պատճառաբանութիւնը բոլորովին անհիմն է, որովհետև վիրաւորիչ մակդիր չկայ. սորա կարող է համոզվիլ ինքը հասարակութիւնը, եթէ «Մասիսը ազնուութիւն» ունենայ ապացոյցի համար տպել յիշեալ իմ յօդուածը:

Պերա 28 յուլիսի Գ. Նիկողոսեան

— —

. . . Տէր խմբագիր,

Դիւղիս կրթասէր երիտասարդութիւնն տնօրոյս Ազգային վարժարանի աղքատիկ մանկտոյն դաստիարակութեանն նիւթապէս և բարոյապէս նպաստելու համար երեք ամսէ ի վեր Ս. Վարդանանց անուամբ ընկերութիւն մը կազմած է և իր վարչութեան Գորձ. Ժողովս ալ ընտրած է ըստ օրինի:

Գործ. Ժողովս մինչև ցարդ յատուկ համեստութեամբ լրագրայս միջոցաւ հարկ չդատեց իր ընկերութեան և Գործ. Ժողովոյս կազմութիւնը հաղորդել բոլոր Հայ լուսամիտ անձանց փափաքելով որ գործնական ապացոյցներ ի ձեռին ներկայանայ ընդհանուր ազգին. իսկ այժմ որ սոյն երջանիկ առիթն ու ապացոյցն փոքր ի չատէ ի ձեռին ունինք, կուզամք հրապարակաւ յայտնել Ազգին Ընկերութեանս կազմութիւնն ու իր նպատակը և խնդրել ազգէն իր նիւթական օգնութիւնն ի բարգաւաճումն Ընկերութեանս:

Գործ. Ժողովս յատկապէս կը յանուանէ թէ արդէն սկսած է ձրի գրեանք և թուղթ գրիչ ևն. մատակարարել ի պէտս աղքատիկ ուսանողաց, ինչպէս նաև դասախօս-դաստիարակին ամսականին մէկ մասն ալ սահմանած է վճարել:

Այս առթիւ յատկապէս մեր խորին շնորհակալիքը հրապարակաւ յայտնէն ընկերութեան կը փութամք յայտնել Մեծապատիւ Ս. Մ. և Օ. Ս. էֆէնտիներուն, որք ազգասիրաբար չանացին և կը չանան ցարդ Ընկերութեանս նիւթական յառաջադիմութեան համար:

. . . Խմբագիր Տէր, բարեհաճեցէք սոյն նամակը հրատարակելու շնորհն ընել Ձեր պատուական լրագրոյն մէջ: Ընդունեցէք այս առթիւ մեր խորին յարգանաց հաւաստին,

Ըրուվ մեծամբ անձնուէր Ազգին
Ի Դիմաց Գործ. Ժողովոյ
Վ. Ատենադպիր Ատենապետ
Ն. Գազազեան Ն. Մ. Էքսէրճեան

28 Յուլիս 1881
Փերիգիւզ

— —

Տէր

Հոգաբարձութիւնս պատիւ ունի ծանուցանելու որ Երկուշաբթի վարժարանաց Մրցանակաբաշխութեան Հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ կիւրակէ Օգոստոս 2, ի ժամ 6, ի Ն. Վարդուհեան վարժարանի:

Կը խնդրեմք որ հաճիք Ձեր և Ձեր ընտանեաց ներկայութեամբ պատուել սոյն հանդէսն:

Մնամք յարգանօք
Ի դիմաց Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Մ. Կ. Նազլիկեան Մ. Էմիրեան

28 Յուլիս 1881
Սամաթիա

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՅ
եւ
ՀԻՊՊՈԼԻՏԵԱՅ ՊԻՆԴԵՄՈՆՏԻ

Կրկին տաղք Գերեզմանականք Տաղաչափեալ յանգաւոր ի Յարութենէ Գ. Մըրմըրեան. Տպագրութիւն Արամեան: Գին 5 ղրուշ

Կը վաճառւի Կ. Պոլսոյ ամեն գրավաճառաց քով և Պահճէ-գաբուսլին սուճի Պօղոս աղայի խանումն, ինչպէս նաև ի Ղալաթիա Քօմիսիօն խանի ստորոտը դուրսի կողմը Պ. Վրուրի Խաչատուրեան լիղիալաճառանոցը:

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Գրեաց Պետրոս Ծ. վարդապետ Կալհօկեցի. նախկին առաջնորդ Սվերդլու

Սոյն գրքուկը կը խօսի Հայաստանի բոլոր գետոց, առաւելապէս Տիգրիսի, Եփրատի, Երասխի և նոցա ճիւղերուն ինչպէս նաև լերանց և գաւառաց նախկին և արդի անուանց սատանայապաշտ Արևորդեաց ազանդից և արարողութեանց. քրդաց Դադման և Լեզուին և մինչև այժմ եղած սխալ գրութեանց վերայ:

Նաև չատ մը հետաքրքրական տեղեկութիւններ և նօթ հարիւրէն աւելի գաւառական բառերու մեկնութիւններ կուտայ և լաւ տեղեկութիւն մը կընէ Պօլսոյ և գաւառաց հայոց լեզուին վրայ:

Կը վաճառւի Մարգարեան գրատունը ի գին 5 ղրշ

— —

Ա Զ Դ

Գումգաբու Հիսար տիպի Աճէմ տաղի կոչուած տեղը «Միութիւն (Ինօսիս) անուն Դավեղերեայ համազգային զբօսարան մը բացուած է ուր թէ եւրոպական և թէ տաճկական նուագածուները կը նուագեն ուրբաթ, չարաթ և կիրակի օրերը:

Յաճախորդք թէ Դավեղերեայ դերքին, թէ ըմպելեայ մաքրութեան և թէ հանգստութեան մասին չատ գոհ կըլլան: Ուզողը կրնայ փորձել:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՒՆՋՆՈՐԴ ՍՈՒՆ ԵԻ ԿՆՈՋ

Հեղինակ Տօքթէօր Լ. Դլէման Բարիզի բժշկական ճեմարանէն. Թարգմանեց 1877ի տպագրութենէն Ե. Արմաբիր:

Թէ ինչ պէտք է դիտնան ամուսնացողք իրենց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան ազդեցութիւնն ամուսնոյ ֆիզիքականին և բարոյականին վրայ. — Ծննդական գործարանաց առողջարանութիւն. — Անկարօղութիւն և իր դարմանները. եւն. եւն:

Սոյն խիստ օգտակար գիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստուողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամեն գրավաճառի քով. Գին 8 ղրուշ:

ՏԷՐ–ԽՄԲԱԳԻՐ
Մ. Ե ՄԵԼԻՔԵԱՆ

Բիզա փաշա խան թիւ 14

ՓԱՆԱՍԻ

ԴԵՂ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴԵՂ, ՍԱՄԱՐՑՈՒԹԻՒՆ

Կը ծախուի Մինասեան եւ Ընկերայ Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիա Կ. Պոլսոյ:

Փանասին իւր օգտակարութեամբն, ինչպէս Ամերիկայի եւ Եւրոպիոյ, նոյնպէս եւ Թուրքիոյ այլ եւ այլ կողմերը մեծ ընդունելութիւն գտած է:

Փանասին զեղոյշոյն եւ գաւառայշոյն լիմիչին ու բարեկամն է, եւ մեծ օրհնութիւն մը համարուած է այն տեղերուն համար, ուր բժիշկ ու դեղ եւ դարման հազիւ կը գտնուին: Փանասին բուսական տեղեկներէ բաղադրեալ լինելով լոլորովին անվնաս է: Փանասին այրածին ցաւը կ'առնէ ու քիչ աւելի մէջ կը բուժէ. նոյնպէս եւ մարմնոյն կարուած ու ճմռուած տեղերուն ցաւն ու բորբոքը չուտով կ'անցնէ:

Ջղային, յօդային եւ ոսկրային սաստիկ ցաւերը բուժելու՝ տարնաւելալը կը հանդարտեցնէ: Ստամոքսի, փորի եւ աղեաց ցաւերը կը կորչ ու պղէ յառաջ եկած դժուարութեանց առաջքը կառնուէ:

Փանասին սիրուի սաստիկ ցաւերը չուտով կը բուժէ: Մարմնոյն կտրուած կամ վիրաւորեալ կողմերն առատ փանասի քսելով չուտ կը բժշկուին ու կը դոցուին: Փանասին կը բժշկէ նաեւ փորհարութիւն, թանչը, հազ, ջերմ, կոկորդի բորբոք եւ ուռեցք, մէջքի ցաւ եւ այլ զանազան ախտեր, որոց սկզբնապատճառը գրեթէ նոյնն են: Այսպէս կը վկայեն չատեր, որք փորձած են: Ընտանիք իրենց տան մէջ ու պանդուխտաք եւ ճանապարհորդք իրենց մօտ փանասի պահելով եւ յանկարծական դժուարութեանց առեն գործածելով մեծ օգուտ կը գտնեն եւ ծանր հիւանդաց առաջը կառնուն: Փանասին հեղուկ է, որ թէ՛ մարմնոյն վրայէն քսելով եւ թէ՛ լոմելով ալ բժշկութիւն կը գործէ:

Գործածութեան կերպը հետն է: Գլխաւոր վաճառատեղին է, Ղալաթիոյ Եէնի-Ճամիի դրան կից Մինասեանին Ամերիկեան վաճառատունը, նաեւ մայրաքաղաքիս գեղագործաց քով ու գաւառներն ալ կը գտնուին: